ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024թ.

(ստորագրություն)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Դասախոսական կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունը կազմում է կադրային քաղաքականության մաս և սահմանում աշխատակիցների ընդունման և ազատման նպատակը, հիմնական խնդիրները, գործընթացը: Քաղաքականության հիմնական նպատակն է Քոլեջի կադրերի ընդունման և ազատման կարգերի սահմանումը և հաստատումը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության և Քոլեջի կանոնադրության համապատասխան, մասնագիտական կադրերի ձևավորումը՝ ըստ պահանջվող մասնագիտությունների և որակավորումների: Դասախոսական կազմի ընդունումը պետք է երաշխավորի բարձր որակավորում ունեցող անձնակազմի հավաքագրում, մրցույթի կազմակերպում և աշխատանքային պայմանագրի կնքում: Աշխատանքի ընդունումն իրականացվում է մրցութային կարգով՝ աշխատատեղի վրա դրվող չափանիշներին համապատասխան:

Թեկնածուի աշխատանքի ընդունումը ենթադրում է՝

- թեկնածուի կամ թեկնածուների կրթության և մասնագիտական որակների բավարարումը թափուր աշխատատեղի պահանջներին,
- թեկնածուի մրցակցության ապահովումը,
- թեկնածուի և ԵՊՏՔ-ի տնօրենի միջև երկկողմանի աշխատանքային պայմանագրի կնքումը:

Սույն քաղաքականությունն իրականացնող մարմինն է ԵՊՏՔ կադրերի բաժինը: Կադրերի բաժինը պատասխանատու է աշխատակիցների աշխատանքի ընդունման, հրամանագրման, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքից ազատման և աշխատակիցների հետ կապված բոլոր փաստաթղթերի վարման համար: Քոլեջում դասախոսական կազմի աշխատանքի ընդունման և ազատման գործընթացը պետք է երաշխավորի պրոֆեսիոնալ աշխատակիցներով համալրումը և աշխատանքային պարտականությունները չկատարող անձնակազմի ազատումը աշխատանքից: